ՊԱՂԵՍՏԻՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Հ. ԲՈՓԱԼՅԱՆ

1947 թ. նոյեմբերի 29-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան որոշում ընդունեց Պաղեստինը բաժանել երկու անկախ պետութիւնների՝ արաբական (Պաղեստին) և հրեական (Իսրայել)։ Արաբական պետությունը պետք է զբաղեցներ 11,1, իսկ Հրեական պետությունը՝ 14,1 հազ. կմ² տարածություն։ «Պաղեստինը բաժանելու բանաձևը պաղեստինյան պրոբլեմի նոր էտապի սկիզբը հանդիսացավ, որը բնութագրվում է նրանով, որ այդ պրոբլեմը դարձավ Իսրայելի և արաբական պետությունների հարաբերությունների հարց»[1]։ Շատ չանցած, 1948 թ. մայիսի 15-ին, անգլո-ամերիկյան իմպերիալիզմի հրահրումով Պաղեստինի տարածքի վրա Իսրայելի և արաբական երկրների՝ Եգիպտոսի, Հորդանանի, Իրաքի, Լիբանանի ու Սիրիայի միջև պատերազմական գործողություններ սկսվեցին։ Դրա հետևանքով Պաղեստինի արաբական պետության համար նախատեսված տարածքից 6,6 հազ. կմ², այդ թվում Երուսաղեմի արևմտյան մասը, զավթեց Իսրայելը, իսկ 5,5 հազ. կմ² անցավ Հորդանանին[2]։

Ավելի քան 960 հազար պաղեստինցի արաբներ բռնի կերպով տեղահանվեցին հարազատ օջախներից[3]։ Պաղեստինցի արաբ գաղթականների հոսքը շարունակվեց նաև հետագա տարիներին։ Այսպիսով, Պաղեստինի արաբական պետություն ստեղծելու մասին ՄԱԿ-ի 1947 թ. նոյեմբերի 29-ի որոշումը մնաց թղթի վրա։ Այսպես ծնունդ առավ պաղեստինյան պրոբլեմը։

1967 թ. արաբա-իսրայելական կոնֆլիկտի շրջանակում այս պրոբլեմը ձեռք բերեց առաջնակարգ նշանակություն։ Օգտվելով արևմտյան տերությունների և սիոնիստների հովանավորությունից, 1967 թ. հունիսի 5-ին իսրայելական ագրեսորները նոր պատերազմ սանձազերծեցին արաբական երկրների դեմ՝ նպատակ ունենալով տապալել առաջադիմական վարչակարգերը Եգիպտոսում ու Սիրիայում, վերացնել պաղեստինյան պրոբլեմը։ Այդ ագրեսիան Իսրայելի ղեկավար շրջանների զավթողական արտաքին քաղաքականության տրամաբանական շարունակությունն էր և նոր փորձություն ու տառապանք բերեց պաղեստինցի արաբներին։ Իսրայելը պատերազմի ընթացքում գրավեց նաև Հորդանան գետի արևմտյան մասը, որը ծնունդ տվեց փախստականների նոր ալիքի։ Բացի այդ, ավելի քան 350 հազար արաբ պաղեստինցիներ արտաքսվեցին հարազատ օջախներից[4]։ Նրանց հիմնական մասն անցավ Հորդանան (Հորդանան գետի արևելյան մասը), ուր պաղեստինցի գաղթականների թիվը հասավ 740 հազարի[5]։

---

[1] اميل توما، جذور القضية الفلسطينية، حيفا، ١٩٧٠، ص ٢٩٢

[2] Г. С. Никитина, Государство Израиль, М., 1968, стр. 58.

[3] G. Challand, La Resistance Palestinienne, Paris, 1970, p. 36.

[4] Նույն տեղում, էջ 45։

[5] Նույն տեղում, էջ 44։

Պաղեստինցի գաղթականներն ապաստանեցին նաև Սիրիայում, Իրաքում, Լիբանանում, ինչպես նաև Եգիպտոսում ու արաբական մյուս երկրներում։ 1967 թ. ագրեսիայից հետո շուրջ 2 միլիոն 722 հազար արաբ պաղեստինցիներից 1 միլիոն 471 հազար 220-ը գաղթականներ էին[6]։

Հայրենի երկիրն ազատագրելու և իրենց օրինական իրավունքները վերականգնելու նպատակով ծնունդ առավ պաղեստինյան դիմադրության շարժումը, որը դարձավ արաբական հակաիմպերիալիստական պայքարի բաղկացուցիչ մասը։ Այն ամբողջությամբ վերցրած՝ ունի հակագաղութային, հակաիմպերիալիստական բնույթ։ Այդ շարժման մեջ ներկայացված են ժամանակակից արաբական աշխարհի համարյա բոլոր գաղափարական և քաղաքական հոսանքները, հանգամանք, որով և պայմանավորված է նրա բարդ և որոշ կողմերով հակասական բնույթը։

1950—1960-ական թվականները պաղեստինյան դիմադրության շարժման կազմակերպական ձևավորման տարիներն էին։ Դա մի կողմից բացատրվում է նրանով, որ արաբական աշխարհում ազգային-ազատագրական շարժման ակնառու հաջողություններն (1952 թ. եգիպտական հեղափոխության հաղթանակը, 1958 թ. հեղափոխության հաղթանակը Իրաքում, 1952—54 թթ. ազատագրական պայքարի հաջողությունները Թունիսում, Ալժիրի ժողովրդի հաղթանակը 1954—1962 թթ. ազատագրական պայքարում և այլն) ու առաջադեմ վարչակարգերի ստեղծումը մեծ ազդեցություն գործեցին պաղեստինցիների ազգային ինքնագիտակցության վրա։ Մյուս կողմից պարզ դարձավ, որ առանձին ազգային կազմակերպությունները և ՄԱԿ-ը անկարող գտնվեցին լուծելու պաղեստինյան փախստականների պրոբլեմը։ Դրա հետևանքով սկսեցին ձևավորվել պաղեստինյան հասարակական միություններ, ասոցիացիաներ, խմբեր և կազմակերպություններ, որոնք նպատակ էին դրել ազատագրել իրենց հայրենիքը։

Սակայն գնալով անհրաժեշտություն էր զգացվում ստեղծելու մի այնպիսի կազմակերպություն, որը կարողանար ղեկավարել պաղեստինյան դիմադրության շարժումը, քանի որ առկա կազմակերպություններն առանձին-առանձին ի վիճակի չէին մեծ թափ հաղորդել պաղեստինցի արաբների դիմադրական շարժմանը, մշակել ու բոլորի համար ընդունելի դարձնել պայքարի հիմնական նպատակները։ Այդ բանը կարող էր անել միայն մի այնպիսի մարմին, որն օժտված լիներ մեծ հեղինակությամբ, միավորեր առանձին խմբերի ջանքերը, կոորդինացներ նրանց գործողությունները և ամբողջ պաղեստինյան ժողովրդին ոտքի հաներ իր արդար դատը պաշտպանելու։ Այս բանը լավ էին ըմբռնում պաղեստինցի արաբների առավել հեռատես քաղաքական գործիչները, ուստի և նրանց մոտ աստիճանաբար հասունանում էր պաղեստինյան առանձին կազմակերպություններն ու խմբերը մեկ մարմնի մեջ միավորելու գաղափարը։ Դրա արտացոլումը եղավ 1964 թ. մայիսի 28-ից հունիսի 2-ը Երուսաղեմում հրավիրված Պաղեստինյան արաբական I կոնգրեսը։ Այն որոշում ընդունեց միավորել առանձին կազմակերպությունները և ստեղծել Պաղեստինի ազատագրության կազմակերպություն (ՊԱԿ)[7]։ Կազմակերպու-

---

[6] العربى، العدد ١٧٨، سبتمبر ١٩٧٣، ص ١٥٢

[7] Այնուամենայնիվ, ՊԱԿ-ի մեջ մտան պաղեստինյան ոչ բոլոր կազմակերպությունները։ ՊԱԿ-ի ստեղծումից հետո էլ որոշ ժամանակ նրանց մի մասը գործում էր ինքնուրույն։

թյան օրենսդիր օրգան դարձավ Պաղեստինի Ազգային խորհուրդը, որը ընտրվում է երեք տարին մեկ անգամ։ ՊԱԿ-ի ղեկավար մարմնի՝ գործադիր կոմիտեի նախագահ ընտրվեց Շուքայրին։

Կոնգրեսն ընդունեց նաև ՊԱԿ-ի գործունեության ծրագրային փաստաթուղթը՝ «Պաղեստինյան Ազգային խարտիան, որի առաջաբանում ասված է. «Մենք՝ պաղեստինցի արաբ ժողովուրդս, հավատարիմ արաբականությանը, հայրենիքն ազատագրելու և նրա ազատությունն ու արժանապատվությունը ձեռք բերելու մեր իրավունքին, վճռել ենք համախմբել մեր բոլոր ուժերը և ջանքերը, սրբազան պատերազմի ճանապարհով շարունակելու պայքարը և շարժումը հասցնել մինչև լիակատար և վերջնական հաղթանակ»[8]։ Խարտիան սահմանում էր, որ Պաղեստինը արաբական աշխարհի անկապտելի մասն է։ «Պաղեստինը արաբական հայրենիք է՝ ազգային կապերով կապված արաբական մյուս երկրների հետ, կազմելով նրանց հետ արաբական մեծ հայրենիք»[9]— ասված է խարտիայի առաջին հոդվածում։ Խարտիայում շոշափված է նաև արաբական միասնության հարցը։ «Արաբական միասնությունը և Պաղեստինի ազատագրությունը երկու միասնական նպատակներ են... Արաբական միասնությունը տանում է դեպի Պաղեստինի ազատագրությունը, իսկ Պաղեստինի ազատագրությունը՝ արաբական միասնությունը։ Երկու ուղղություններով տարվող աշխատանքներն ընթանում են կողք-կողքի»[10]։ Խարտիայում ընդգծված է, որ Պաղեստինի ազատագրությունը ազգային պարտք է, որի «պատասխանատվությունն ընկած է ողջ արաբ ազգի վրա»[11]։

1968 թ. հուլիսի 10—17-ը Կահիրեում տեղի ունեցած Պաղեստինյան արաբական IV կոնգրեսը որոշ փոփոխություններ մտցրեց I կոնգրեսի ընդունած ծրագրային փաստաթղթի մեջ։ Հատկապես փոփոխության ենթարկվեց XXI հոդվածը։ Այն մասնակիորեն լրացվեց։ Պաղեստինի ազատագրության հարցի լուծումը այժմ արդեն պաղեստինյան զինված պայքարի մեջ տեսնելով՝ պաղեստինցի արաբ ժողովուրդը մերժում էր ամեն մի որոշում, որը չէր նախատեսում Պաղեստինի լիակատար ազատագրությունը[12]։

1968 թ. Պաղեստինյան արաբական IV կոնգրեսը պաշտոնազրկեց Շուքայրիին։ Սա միանգամայն վճռական և դրական քայլ էր, որովհետև նրա թույլ տված սխալները զգալի հարված էին հասցրել պաղեստինյան դիմադրության շարժմանը։

1967 թ. իսրայելական ագրեսիայից հետո Պաղեստինի ժողովրդի քաղաքական ակտիվությունը մեծացավ։ Դրա ապացույցը պարտիզանական նոր կազմակերպությունների ստեղծումն էր։ 1970 թ. մայիսի 30-ից հունիսի 4-ը Կահիրեում տեղի ունեցավ Պաղեստինի Ազգային խորհրդի VII նստաշրջանը, որը որոշում ընդունեց ՊԱԿ-ի մեջ միավորել բոլոր այն կազմակերպությունները, որոնք 1964 թ. չէին մտել նրա մեջ կամ հետո էին ձևավորվել։ Դրա շնորհիվ ՊԱԿ-ը դարձավ ավելի ներկայացուցչական։

---

8 ملف وثائق فلسطين، الجزء الثانى، من عام ١٩٥٠ الى عام ١٩٦٩، وثيقة رقم ٣١٥، ص ١٢٧٥

9 Նույն տեղում, էջ 1275։

10 Նույն տեղում, էջ 1271։

11 Նույն տեղում, էջ 1276։

12 „International Documents on Palestine 1968", Beirut, 1971, p. 394.

Պաղեստինյան Ազգային խորհրդի VII նստաշրջանն ընտրեց ղեկավար նոր մարմին՝ Կենտկոմ, որի կազմի մեջ մտան 27 հոգի, այդ թվում պաղեստինյան բոլոր կազմակերպությունների ղեկավարները։ Պաղեստինի ազատագրության կազմակերպության Կենտկոմի նախագահ ընտրվեց պարտիզանական խոշորագույն կազմակերպության՝ «Ֆաթհի» ղեկավար Յասիր Արաֆաթը։

Պաղեստինյան քաղաքական-պարտիզանական կազմակերպությունները, որոնք 1970 թ. հունիս ամսից գործում են Պաղեստինի ազատագրության կազմակերպության հովանու տակ, թվով 11-ն են[13]։ Դրանցից առավել ազդեցիկ կազմակերպություններն են «Ֆաթհը»՝ Յասիր Արաֆաթի ղեկավարությամբ, որը ստեղծվել է 1955 թ.[14], 1967 թ. նոյեմբերին հիմնադրված «Պաղեստինի ազատագրության ժողովրդական ճակատը»[15], որի ղեկավարն է Ջորջ Հաբաշը և «Պաղեստինի ազատագրության ժողովրդա-դեմոկրատական ճակատը», որը կազմավորվել է 1969 թ. փետրվարի 21-ին, Նայեֆ Հավատմայի ղեկավարությամբ[16]։

Կան նաև մի շարք այլ կազմակերպություններ, որոնք ՊԱԿ-ի մեջ չեն մտնում։ Դրանցից ամենահայտնին 1970 թ. մարտին Հորդանանի կոմունիստական կուսակցության օժանդակությամբ ստեղծված «Կուվատ ալ-Անսար» կազմակերպությունն է, որի ստեղծմանը մասնակցել են նաև Իրաքի, Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցությունները։

«Պարտիզանական կազմակերպությունների բազմաքանակությունը որոշ չափով արտացոլում է հասարակության (արաբական— Ա. Թ.) մեջ եղած դասակարգային սահմանազատումները»[17]։ Այս կազմակերպությունների գործունեության գաղափարական հիմքը Պաղեստինյան արաբական I կոնգրեսի ընդունած Ազգային իսլամիան է։ Միաժամանակ վերոհիշյալ կազմակերպություններից յուրաքանչյուրն ունի իր յուրահատուկ քաղաքական հավատամքը և գործակերպը։

1969 թ. հրապարակվեց «Ֆաթհ» կազմակերպության ծրագրային փաստաթուղթը, որտեղ ասված էր, որ «Ֆաթհը» պաղեստինյան լայն մասսաների ազգային-ազատագրական շարժումն է»[18]։ Այն իր գլխավոր խնդիրն է համարում պայքարն ընդդեմ սիոնիզմի, որի հենարանը համաշխարհային իմպերիալիզմն է[19]։ «Ֆաթհը» նպատակ ունի ստեղծել «պաղեստինյան դեմոկրատական անկախ պետություն, որն իր քաղաքացիների համար ապահովելու է հավասար իրավունքներ՝ առանց որևէ խտրականության»[20]։

«Ֆաթհը» մինչև վերջերս մերժում էր պաղեստինյան պրոբլեմի քաղաքական լուծումը։ «Այդ դիրքը պատմականորեն հետևում է պաղեստինյան ազատագրական շարժման պրոբլեմի խաղաղ լուծման բոլոր պլաններին չվստահելու ավանդական կուրսին։ Արաբական պաղեստինյան ազգային կազմակեր-

---

13 غازى خورشيد. دليل حركة المقاومة الفلسطينية، بيروت، ١٩٧١، ص ١١

14 Նույն տեղում, էջ 11։

15 Նույն տեղում, էջ 111։

16 Նույն տեղում, էջ 143։

17 «Проблемы мира и социализма», 1972, № 5, стр. 46.

18 غازى خورشيد، دليل حركة المقاومة الفلسطينية، بيروت، ١٩٧١، ص ١٤

19 Նույն տեղում, էջ 28։

20 Նույն տեղում։

պությունների պարագլուխները այդպիսի գծի կողմնակից էին դեռևս Բալֆուրի դեկլարացիայի (1917) ժամանակվանից. նրանց այդ դիրքին էին մղում Պաղեստինի ժողովրդի դեմ կազմակերպվող մշտական դավադրությունները»[21]։ Ընդհանրապես մերժելով հարցի քաղաքական կարգավորման հնարավորությունը, «Ծաթհը» ըստ էության թույլ էր տալիս սխալ, որն օգտագործում էին Իսրայելի կառավարող շրջանները իրենց զավթողական քաղաքականությունն արդարացնելու համար։ «Այդ ոչ ռեալիստական դիրքը, ինչպես ճիշտ նշել է Հորդանանի կոմկուսի Կենտկոմի անդամ Ն. Աշհաբը, հաշվի չի առնում արաբական ազատագրական շարժման վիճակը, հունիսյան պատերազմի ժամանակ նրան հասցված հարվածից հետո»[22]։ «Պաղեստինի ազատագրության ժողովրդական ճակատ» և «Պաղեստինի ազատագրության ժողովրդա-դեմոկրատական ճակատ» կազմակերպությունները նույնպես իրենց վերջնական նպատակն են համարում պաղեստինյան պետության ստեղծումը։ «Պաղեստինյան ազգային շարժման նպատակն է Պաղեստինում ստեղծել ազգային դեմոկրատական պետություն, որտեղ արաբները և հրեաները կապրեն որպես իրավահավասար քաղաքացիներ»[23],— ասված է այդ կազմակերպությունների քաղաքական ծրագրում։ Իրենց անմիջական թշնամիներ նրանք համարում են «Իսրայելը, սիոնիզմը, համաշխարհային իմպերիալիզմը և արաբական ռեակցիան»[24]։ Իսրայելն, ըստ Պաղեստինի ազատագրության ժողովրդական ճակատի ծրագրի, «համաշխարհային սիոնիստական շարժման անբաժանելի մասն է»[25]։

Պաղեստինի ազատագրության ժողովրդա-դեմոկրատական ճակատը Իսրայելը «սիոնիստական շարժման ղեկավարությամբ» համարում է համաշխարհային իմպերիալիզմի (ԱՄՆ-ի ղեկավարությամբ) ծնունդը[26]։

Մերժելով պաղեստինյան պրոբլեմի քաղաքական կարգավորման առաջարկությունները, Պաղեստինի ազատագրության ժողովրդա-դեմոկրատական ճակատը գտնում էր, որ դրանք «արաբ ժողովրդին ենթարկելու, նրա ազգային պայքարը ճնշելու և հատկապես պաղեստինյան դիմադրության շարժումը վերացնելու փորձեր են»[27]։ Պաղեստինի ազատագրությունը համարելով համաարաբական խնդիր, այդ ճակատը գտնում է, որ դրան հասնելու միակ ուղին համաարաբական ժողովրդական պայքարն է։

Այսպիսով՝ պաղեստինյան դիմադրության շարժման կազմակերպությունների հայացքների մեջ կարելի է առանձնացնել մի շարք ընդհանուր դրույթներ։ Դրանք են՝ Պաղեստինն ազատագրելու նպատակի ընդհանրությունը և

---

21 Н. Ашхаб, Преодолеть кризис палестинского сопротивления («Проблемы мира и социализма», 1972, № 5, стр. 44).

22 Նույն տեղում։

23 الوثائق الفلسطينية العربية لعام ١٩٦٩، وثيقة رقم ٨٧، بيروت، ١٩٧١، ص ٩٢

24 Նույն տեղում, էջ 79։

25 الجبهة الشعبية لتحرير فلسطين، الاستراتيجية السياسية و التنظيمية، عمان، ١٩٧٠، ص ١٨

26 الوثائق الفلسطينية العربية لعام ١٩٦٩، بيروت، ١٩٧١، وثيقة رقم ٣٦٤، ص ٣٨

27 Նույն տեղում, էջ 364։

արաբական ազգայնականությունը, որի համաձայն Պաղեստինը արաբական աշխարհի անբաժանելի մասն է, պայքարի հակաիմպերիալիստական ուղղվածությունը, պաղեստինյան պետություն ստեղծելու նպատակը։

Պաղեստինյան դիմադրության շարժումը օբյեկտիվորեն նպաստել և շարունակում է նպաստել արաբ ժողովրդի հակաիմպերիալիստական պայքարի աճին ու ամրապնդմանը և միաժամանակ աջակցում է արաբական երկրներին՝ վերացնելու 1967 թ. իսրայելական ագրեսիայի հետևանքները։ Այն փաստը, որ առանց դիմադրության շարժման հնարավոր չէ կարգավորել մերձավորարևելյան կոնֆլիկտը, ակնբախ դարձավ 1973 թ. հոկտեմբերի արաբա-իսրայելական պատերազմի ժամանակ։ Այդ պատերազմում բացահայտվեց արաբական ժողովուրդների վճռականությունը՝ վերականգնելու իրենց օրինական իրավունքները և պաշտպանելու ձեռք բերած նվաճումները։

Լիբանանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի քարտուղար Քերիմ Մրուվեն 1973 թ. հոկտեմբերի արաբա-իսրայելական պատերազմի մասին գրում է. «Արդարացի հայրենական պատերազմը, որ մղեցին արաբական ժողովուրդները, հզոր վերելք առաջացրեց ազգային-ազատագրական շարժման մեջ...։ Նոր պայմաններում էլ ավելի պարզորոշ դարձան երկու հիմնական խնդիրներ. առաջին՝ արաբական հողերի ազատագրումը իսրայելական օկուպացիայից, Պաղեստինի արաբ ժողովրդի օրինական ազգային իրավունքների ապահովումը, այդ թվում նրա ինքնորոշման իրավունքը հարազատ հողի վրա, երկրորդ՝ ազատագրական շարժման զարգացումը քաղաքական, տնտեսական և սոցիալական բնագավառներում ձեռք բերած նվաճումների ամրապնդման, նոր առաջադիմական վերափոխումների իրականացման ուղիով»[28]։

1973 թ. պատերազմից հետո արաբական երկրների միջազգային դիրքերն ամրապնդվեցին։ Այս գործում մեծ դեր խաղացին Սովետական Միությունը և սոցիալիստական մյուս երկրները, որոնք վճռականորեն պահանջում են իսրայելական զորքերի դուրս բերումը 1967 թ. զավթված արաբական հողերից և Պաղեստինի արաբ ժողովրդի օրինական իրավունքների ապահովումը։

Սովետական Միության դիրքավորումը մերձավորարևելյան կոնֆլիկտում և պաղեստինյան հարցում պարզորոշ կերպով արտահայտեց ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևը 1973 թ. հոկտեմբերին Մոսկվայում տեղի ունեցած խաղաղասեր ուժերի համաշխարհային կոնգրեսում արտասանած ճառում։ Նա ասաց. «Մենք հաստատորեն հանդես ենք գալիս հօգուտ այն բանի, որ Մերձավոր Արևելքի բոլոր, կրկնում եմ, բոլոր պետությունների և ժողովուրդների համար պետք է ապահովվեն խաղաղություն, անվտանգություն և սահմանների անխախտություն։ Սովետական Միությունը պատրաստ է մասնակցել համապատասխան երաշխիքներին»[29]։

Սովետական Միության անխոնջ ջանքերի, ողջախոհ և խաղաղասիրական քաղաքականության շնորհիվ Մերձավոր Արևելքի կնճռոտ խնդրի կարգավորումը հասել է շոշափելի արդյունքի։ Այդ գործում կարևոր քայլեր հանդիսացան ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1973 թ. հոկտեմբերի 22-ի բանաձևը՝ կրակի դադարեցման վերաբերյալ, իսրայելա-եգիպտական համաձայնությու-

[28] К. Мруэ, Реализовать возможности нынешней ситуации на Ближнем Востоке («Проблемы мира и социализма», 1974, № 3, стр. 61).

[29] Լ. Ի. Բրեժնև, Հանուն արդարացի, դեմոկրատական խաղաղության, հանուն ժողովուրդների անվտանգության և միջազգային համագործակցության, Երևան, 1974, էջ 17։

նր Սուեզի շրջանում զինված ուժերի տարաբաժանման մասին, ինչպես նաև 1974 թ. հունիսի 5-ին ժնևում ստորագրված ամփոփիչ փաստաթղթերը՝ սիրիական և իսրայելական զինված ուժերի տարանջատման մասին։

Սակայն կատարվածը կոնֆլիկտի կարգավորման սոսկ սկիզբն է։ Դրա ամենախճճված հանգույցը Պաղեստինի արաբ ժողովրդի օրինական իրավունքների ճանաչման հարցն է։

Մերձավոր Արևելքում կատարված տեղաշարժերը և եգիպտա-իսրայելական ու սիրիա-իսրայելական զորքերի տարանջատման մասին ընդունված որոշումները նոր իրադրություն ստեղծեցին, որը, բնականաբար, ՊԱԿ-ից պահանջում է ճշգրտել իր դիրքորոշումը, փոփոխություններ մտցնել ծրագրային փաստաթղթերի և քաղաքական կուրսի մեջ։ Այդ նպատակն էր հետապնդում ՊԱԿ-ի Ազգային խորհրդի XII նստաշրջանը, որը գումարվեց Կահիրեում, 1974 թ. հունիսի 1—8-ը։ Այն փոփոխություններ մտցրեց ՊԱԿ-ի քաղաքական հիմնական ծրագրում և սահմանեց ՊԱԿ-ի քաղաքական գործունեության ծրագիրը մոտ ապագայում։

Նստաշրջանում ընդունված ծրագրի կենտրոնական հարցը Պաղեստինի պետության վերականգնման խնդիրն է։ Խորհուրդը միաձայն որոշում ընդունեց Պաղեստինի տարածքի մի որևէ մասի վրա ազգային պետություն հիմնել[30]։

Ազգային խորհրդի XII նստաշրջանը սահմանեց նաև Պաղեստինի ապագա պետության կառավարման ձևը։ Ըստ այդ ծրագրի Պաղեստինում հաստատվելու է ազգային իշխանություն, որը պետք է համախմբի հեղափոխական, հայրենասիրական և դեմոկրատական բոլոր ուժերին։ Հենց այդ ուժերն էլ պետք է կազմեն պաղեստինյան ազգային իշխանության սոցիալ-դասակարգային հենարանը։ Այդ իշխանությունը պետք է վարի առաջադիմական և հակաիմպերիալիստական ու հակասիոնիստական քաղաքականություն[31]։

ՊԱԿ-ի նոր ծրագիրը նշում է, որ միջազգային հեղափոխական շարժումը Պաղեստինի ազատագրական շարժման բնական դաշնակիցն է։ Հետևաբար պաղեստինյան դիմադրության շարժումը իր տեղը պետք է գրավի համաշխարհային հեղափոխական շարժման մեջ և նրա «սկզբունքային հարաբերություններն ու դաշնակցությունները այդ շարժման որևէ ջոկատի, և առաջին հերթին Սովետական Միության հետ, նպատակ պիտի ունենա ամրապնդել հեղափոխական ուժերի միասնությունը՝ դիմագրավելու համար իմպերիալիզմին, նրա ծրագրերին և գործակալներին»[32]։

Այսպիսով, ՊԱԿ-ի Ազգային խորհրդի XII նստաշրջանի ընդունած որոշումներն ու նոր ծրագրային փաստաթղթերն աներկբայորեն վկայում են Պաղեստինի դիմադրության շարժման պահանջների կոնկրետացման մասին։ Պաղեստինցիներն այժմ ավելի հստակ ու որոշակիորեն են ձևակերպում ու առաջադրում իրենց պահանջները։ Դա վկայում է նաև այն մասին, որ ՊԱԿ-ի մեջ ուժեղացել է հեղափոխական-դեմոկրատական թևը, որը և այժմ հանդիսանում է այդ կազմակերպության հիմնական տոն տվողը։ Ազգային խորհրդի ընդունած որոշումներն այդ ուժերի խոշոր հաղթանակն են։

---

30 «Պաղեստինի Ազգային խորհրդի որոշումները» («Կանչ», Բեյրութ, 15. VI. 1974)։

31 Նույն տեղում։

32 Նույն տեղում։

ОРГАНИЗАЦИЯ ОСВОБОЖДЕНИЯ ПАЛЕСТИНЫ

А. Г. ТОПАЛЯН

Резюме

Одним из сложнейших вопросов Ближнего Востока считается палестинская проблема, имеющая более чем полувековую историю.

Движение палестинского сопротивления, вышедшее на межарабскую арену после израильской агрессии 5 июня 1967 г., является одной из составных частей общеарабской антиимпериалистической борьбы и имеет в целом антиколониальную, антиимпериалистическую направленность. Этим движением руководит Организация освобождения Палестины (ООП), главным вопросом политической программы которой является восстановление государства Палестины и обеспечение законных прав арабского народа Палестины.